

կաւազին. եւ այնոր կէսն կղերիկոսի. նոյնպէս  
 թաղման եւ այլոցն Բ. Բ. Գ. Գ. շահի կամ  
 այլ աւելի փոքրաւորաց տան. եւ յետ կատար-  
 110 ման տուն տանին յընթրիս: Բայց յոյժ անու-  
 շահամ եւ համեղ աղնիւ կերակուր տան, ա-  
 մենալի սեղան եւ բաղմակերպ եւ դնօջ. զոր  
 ոչ Ստամպօլ, ոչ Հալապ, ոչ այլ տեղ չեմ տե-  
 սել այնպիսի լի եւ առատ կերակուր, միայն ի  
 115 Լէհ: Այլ եւ խորտիկք՝ պիրեան, պօրակնի  
 եւ այլ քաղցրածաշակ եւ բաղմածախ եւ մե-  
 ծագին: Իսկ գինին Արղընու քաղցր եւ թանձր.  
 բայց թէ մին Փինճան խմես, բաւ է քեղ. զի  
 թուրքի աշխարհն իրեք գինի յիշուի. մինն  
 120 Պուլտուխու, մին՝ Անկուրու եւ մին՝ Ար-  
 ղընու:

Եւ տներն դրսեւանց աղտեղի կ'երեւի.  
 բայց յորժամ ներս մտանես, այլ չուղես զնալ  
 անտի. քանզի Հալպայ տներն կու նմանին՝  
 125 աղնիւ, թալանլու, նաշխուն եւ քօչքերով: Եւ  
 քաղաքացիքն յոյժ բարեկեցիկք եւ պարկեշտ.  
 նաեւ ընթրիս բաղմեալ ոչ արբենան, ոչ շատ  
 խօսին, այլ հեղ եւ հանդարտութեամբ. զի ա-  
 մէնքն կարդացողք, տօմարադէտք եւ հանճա-  
 130 րեղք, զրուցատրութիւն թէ առուտուր, թէ  
 ասուլիս՝ ամէն մարդավարութեամբ եւ ամե-  
 նայն ինչ խմաստութեամբ. եւ զրուցն զբարբար  
 եւ ոճիւ բառքն: Այլ եւ ինքեանք պարթեւք,  
 գեղեցկատիպք, աղնաուուրք եւ ուժեղք, որ-  
 135 պէս ձուղեցիք եւ Լէհք, որ ցանկայ մարդ ի